Հավելված 7
«ԳՖՆԱԵԽՊ 2 ԳԴ-ՇՀԱՊՁԲ-15/3» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

«ԳՖՆԱԵԽՊ 2 ԳԴ-ՇՀԱՊՁԲ-15/3» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳՖՆԱԵԽՊ 2 ԳԴ-ՇՀԱՊՁԲ-15/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ,,Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու ,,Գնումների աջակցման կենտրոն,, ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված մաքրիչ նյութերը:

Սույն հրավերի ծածկագիրն է հանդիսանում «ԳՖՆԱԵԽՊ 2 ԳԴ-ՇՀԱՊՁԲ-15/3»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Գյումրի, Շիրակացի 10 հասցեով, մինչև 2015թ. Փետրվարի 24-ը, ժամը_15.00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար՝ Թամարա Երիցյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ,,Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն ՊՈԱԿ-ի շենքում, Շիրակացի 10 հասցեով, տնօրենի սենյակում, 2015թ.-ի փետրվարի 24-ին, ժամը 15.00-ին:

Գնման առակա է հանդիսանում ,,Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ մաքրիչ նյութերի ձեռք բերումը:

,,Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ մաքրիչ նյութերի մատակարարման /որոնք կազմված են 25 չափաբաժիններից/ տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնայինպայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. Գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ, գնային առաջարկ. Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայցնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

,,Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն ՊՈԱԿ-ի էլեկտրոնային հասցեն է՝ nansengisherotik@mail.ru :

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ փաստաթղթեր և տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև՝ կարգի 110-րդ 7/-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները.
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և տվյալներ:

Ա. Կարապետյան

# Պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պետական գնման պայմանագիր N ------ «ԳՖՆԱԵԽՊ 2 ԳՅ-ՇՀԱՊՁԲ-15/3»

ք. Գյումրի << >> << >> 201 թ.

«Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն ՊՈԱԿ-ն , ի դեմս տնօրեն` Ա. Կարապետյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից, (այսուհետև` Գնորդ) և ____________________ ի դեմս Ընկերության տնօրեն Յուրիկ Պողոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև` Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով` Տեխնիկական բնութագրով նախատեսված մաքրիչ նյութեր /այսուհետ` Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն 30 աշխատանքային օր,որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1 Գնորդն իրավունք ունի`**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի` սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքն` իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7,2 կետով նախատեսված տույժը:

բ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը վաճառողի կողմից պարտավորությունները խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք` սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն` սույն պայմանագրով սահմանված սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը .

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), Եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,եթե`

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք,որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը.

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.1.6.Կախված երեխաների թվաքանակի փոփոխությունից, տրամադրվող հումանիտար օգնության քանակից գնման և վճարման ժամանակացույցով նախատեսվող ապրանքի քանակը կարող է փոփոխվել:

**3.2 Գնորդը պարտավոր է`**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ սույն պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլումմատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ << օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ______________________

(______________________) << դրամ: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածում:Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և << օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և << օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով:Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 2 հավելվածով վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին,Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Պայմանագրի կամ դրա մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

6.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատու՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

**9,1,2 Սույն պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքվելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:**

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի

միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9,5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

9,6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9,7 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2 և 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9,8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9,9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**Գնորդ**

**Վաճառող**

«Ֆրիտյոֆ Նանսենի» անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն

«Կոնվերսբանկ» Կոմպանի Մ/Ճ

Հ/Հ 193003199604O100

ՀՎՀՀ 05522929

ստորագրություն

Կ.Տ.

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
„ „ „ 201 թ կնքված

«ԳՖՆՄԵԽՊ 2 ԳՀ-ՇՀԱՊՁԲ-15/3»
գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| N | Ձեռք բերվող ապրանքի անվանումը | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածը | Նախատեսվում է ֆին. անսավորել ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից, ընդ որում՝ | | | | | Ընդամենը տարեկան |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Տարեկան | |
| 1 | Զուգարանի թուղթ | 426700 | | | | | | 100% |
| 2 | Լվացվելու օճառ | 426700 | | | | | | 100% |
| 3 | Կանանց հիգիենայի պարագաներ | 426700 | | | | | | 100% |
| 4 | Փոշի /հատակի և պատերի լվացման/ | 426700 | | | | | | 100% |
| 5 | Ախտահանիչ մաքրող միջոցներ՝ լվացարանների և լոգարանների համար | 426700 | | | | | | 100% |
| 6 | Ապակի լվացող հեղուկ /400գ/ | 426700 | | | | | | 100% |
| 7 | Հատակի խոզանակ | 426700 | | | | | | 100% |
| 8 | Ավել սենյակի | 426700 | | | | | | 100% |
| 9 | Աման լվացող հեղուկ | 426700 | | | | | | 100% |
| 10 | Սպիտակեցնող հեղուկ | 426700 | | | | | | 100% |
| 11 | Անձեռոցիկ | 426700 | | | | | | 100% |
| 12 | Լաթակ | 426700 | | | | | | 100% |
| 13 | Սպունգ | 426700 | | | | | | 100% |
| 14 | Լվացքի փոշի ավտոմատ լվածքի մեքենաների համար | 426700 | | | | | | 100% |
| 15 | պերսոլ | 426700 | | | | | | 100% |
| 16 | ամանի ճիլ | 426700 | | | | | | 100% |
| 17 | աղբի պարկ | 426700 | | | | | | 100% |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | ժավելի սպիրտ | 426700 | | | | | | 100% |
| 19 | շամպուն | 426700 | | | | | | 100% |
| 20 | բակի ավել | 426700 | | | | | | 100% |
| 21 | հատակի լաթ | 426700 | | | | | | 100% |
| 22 | հատակի մածուկ | 426700 | | | | | | 100% |
| 23 | լամինատ մաքրելու հեղուկ | 426700 | | | | | | 100% |
| 24 | օդի դեզոդոր | 426700 | | | | | | 100% |
| 25 | ատամի մածուկ | 426700 | | | | | | 100% |
| | **Ընդամենը** | | | | | | 0 | |

ԳՆՈՐԴ

«Ֆրիտյոֆ Նանսենի» անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատության

«Կոնվերսբանկ» Կաճառի Մ/Ճ

Հ/Հ 1930031996040100

ՀՎՀՀ 05522929

տնօրեն

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

/տնօրեն/

Կ.Տ

«ԳՖՆՄԵԽՊ 2 ԳՅ-ՇՀԱՊՁԲ-15/3» N____ գնման պայմանագրի

Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց

2015 թվականի գնման ենթակա մաքրիչ նյութերի քանակը

| Հ/Բ | Անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IVեռամսյակ | Քանակը տարեկան | Գումարը /տարեկան/ | Գնման ժամանակացույցը ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Զուգարանի թուղթ | Երիզերտ կամ եռաշերտ, 9,8սմX12,5սմ, 150 թերթիկ, երկ. 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թողարկված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը` ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված ,Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի□ | հատ | մինչև-325 | մինչև-325 | մինչև-325 | մինչև-325 | 1300 | | |
| 2 | Լվացքի օճառ | չորսուների, կտորների և այլ ձևերով, որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս` ,Չեզոքե և ,Էքստրան տեսակների համար 78 գ, ,Մանկական և ,Սովորական տեսակների համար 74 գ, աղայնությունների զանգվածային (վերահաշվարկված ըստ Na2O) մասը ոչ ավելի` ,Չեզոքե տեսակի համար բացակայում է, ,Էքստրան տեսակի համար` 0,2 %, ,Մանկական տեսակի համար` 0,15 %, ,Սովորական տեսակի համար` 0,22 %, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)` (36-41) $^{0}$ C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը` 0,4 %-ից ոչ ավելի, անվտանգությունը` ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված ,N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներն սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը` ըստ ԳՕՍՏ 28546-2002 | հատ | մինչև-145 | մինչև- 145 | մինչև-145 | մինչև-148 | 583 | | |
| 3 | Կանանց հիգիենայի | ներդիրներ եռակալող 5-7 կաթիլ, Գերմանական համ համարժեքը | տուփ | մինչև-17 | մինչև-17 | մինչև-17 | մինչև-19 | 70 | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | Փոշի /հատակի և պատերի լվացման/ | Սպիտակ կամ բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փոշի, փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը՝ 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %. ԳՕՍՏ 25644-96 Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված ,Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի համաձայն | կգ | մինչև- 5 | մինչև-5 | մինչև-5 | մինչև-5 | 20 | | |
| 5 | Ախտահանիչ մաքրող միջոցներ՝ լվացարանների և լոգարանների համար | Փոշի մաքրող ունակությամբ, 500գ տարողությամբ տարայով, **«Rakhsha» կամ համարժեք:** | տուփ | մինչև-22 | մինչև-22 | մինչև-22 | մինչև-24 | 90 | | |
| 6 | Ապակի լվացող հեղուկ /400գ/ | Մաքրող միջոց ապակե մակերևույթների համար, փոշեցրիչով, 400մլ **«BARF» ֆիրմայի կամ համարժեքը :** | հատ | մինչև-5 | մինչև- 10 | մինչև-10 | մինչև-5 | 30,0 | | |
| 7 | Հատակի խոզանակ | խոզանակ՝ փայտե | կգ | մինչև-3 | մինչև-0 | մինչև-2 | մինչև-0 | 5 | | |
| 8 | Ավել սենյակի | Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (350-500) գրամ, երկարությունը (85-90) սմ, ավլող մասի լայնքը (35-40) սմ | հատ | մինչև-7 | մինչև-8 | մինչև-8 | մինչև-7 | 30 | | |
| 9 | Աման լվացող հեղուկ | H1 կամ համարժեքը | լիտր | մինչև-42 | մինչև-42 | մինչև-42 | մինչև-44 | 170 | | |
| 10 | Սպիտակեցնող հեղուկ | Ժավել կամ համարժեքը | Լիտր | մինչև-37 | մինչև-37 | մինչև-37 | մինչև-39 | 150 | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11 | Անձեռոցիկ | Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, տարբեր չափերի, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. նոյեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված ,Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգին | տուփ | մինչև-0 | մինչև-0 | մինչև-250 | մինչև-250 | 500 | | |
| 12 | Լոգանք | Փաթեթավորված տեղական արտադրության կամ համարժեքը | տուփ | մինչև-35 | մինչև-35 | մինչև-35 | մինչև-35 | 140 | | |
| 13 | Սպունգ | Սանիտարահիգիենիկ նշանակության, սինթետիկ, խորաներդաձև կամ ուղղանկյուն, (15x20) սմ չափի, հաստությունը՝ 3 սմ կամ այլ չափերի: | հատ | մինչև-10 | մինչև-15 | մինչև-15 | մինչև-20 | 60 | | |
| 14 | Էվացքի փոշի ավտոմատ լվացքի մեքենաների համար | Բաղադրությունը՝ - մինչև 5 % պոլիկարբօքսիլներ պարունակող կատիոնային արտաքին ակտիվ նյութերից (ԱԱՆ), 5-15 % թթվածին պարունակող սպիտակեցնող նյութերից, 15-30 % -անիոնային ԱԱՆ, ֆոսֆատներ, էնզիմներ, օպտիկական սպիտակեցնող նյութերից: Հոտը՝ ըստ կիրառված հոտավորիչի | կգ | մինչև-92 | մինչև-92 | մինչև-92 | մինչև-94 | 370 | | |
| 15 | պերոշ | 200գ տարողությամբ Պարսկական արտադրության կամ համարժեքը | տուփ | մինչև-50 | մինչև-50 | մինչև-50 | մինչև-50 | 200 | | |
| 16 | ածանի մի | Պարսկական արտադրության կամ համարժեքը | հատ | մինչև-5 | մինչև-5 | մինչև-4 | մինչև-5 | 19 | | |
| 17 | աղբի պարկ | Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար՝ ըստ ԳՕՍՏ 10354-82 կամ համարժեք | տուփ | Մինչև-10 | Մինչև-10 | մինչև-20 | մինչև-10,0 | 50 | | |
| 18 | ժավելի սպիրտ | Ժավելի սպիրտ հեղուկ 500մլ տարաներում "AS" ֆիրմային կամ համարժեքը : | լիտր | Մինչև-25 | Մինչև-250,0 | մինչև-25 | մինչև-25 | 100 | | |
| 19 | շամպուն | Շամպուն տարբեր տեսակի բնական բույսերից, պլաստմասե տարաներում Timotei» կամ համարժեքը: | լիտր | մինչև-30 | մինչև-30 | մինչև-35 | մինչև-30 | 125 | | |
| 20 | թակի ավել | Բակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (700-800) գ, երկարությունը՝ (85-90) սմ, ավլող մասի լայնքը (50-60) սմ | հատ | մինչև-1 | մինչև-1 | մինչև-1 | մինչև-1 | 4 | | |
| 21 | հատակի լաթ | Հատակ մաքրելու գործվածք 50x50սմ չափի: | հատ | Մինչև 5 | Մինչև 5 | Մինչև 5 | մինչև-5 | 20 | | |
| 22 | հատակի մածուկ | Չցնդող նյութերի զանգվածային մասը՝ ոչ պակաս 30 %-ից, կաթիլանկման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 75oC-ից, փայլեցնող հատկությունը ըստ փայլաչափի սանդղակի՝ ոչ պակաս 12-ից, թաղանթի ջրակայունությունը՝ ոչ պակաս 1 բալից, թաղանթի փոշեկուտակման հատկությունը՝ ոչ ավելի 0,8 մգ/սմ2-ից, չափածրարված 400 գ-ից մինչև 2500 գ տուփերով: | կգ | մինչև-1 | մինչև-0 | մինչև-0 | մինչև-1 | 2 | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 23 | լամինատ մաքրելու հեղուկ | Սալահատակի մաքրող միջոց գունավորիչ հոտով և գույնով, մաքրող ունակությունը ոչ պակաս 100%: | լիտր | մինչև-2.5 | մինչև-2.5 | մինչև-2.5 | մինչև-2.5 | 10 | | |
| 24 | օդի դեզոդոր | Փակ սենյակի հոտի թարմացման համար, վակուումային բալոնիկով, թարմ ծաղկային բուրմունքով | հատ | մինչև-5 | մինչև-5 | մինչև-5 | մինչև-10 | 25 | | |
| 25 | ատամի մածուկ | Ատամների և բերանի խոռոչի խնամքի համար Ատամի մածուկի արտաքին տեսքը և թանձրությունը՝ ատամի խոզանակի մակերեսին մնացող համասեռ զանգված, հոտը, գույնը և համը տվյալ անվանման մածուկին հատուկ գույնի, հոտի և համի, մասնիկներ չպետք է լինեն, ջրածնական ցուցիչը (pH)՝ 5,5-10,5, ատամի մածուկը թունաբանորեն և կլինիկապես պետք է լինի անվտանգ, անվտանգությունը՝ Սան Պին 1.2.676-97, ԳՕՍՏ 7983-99 | կգ | մինչև-25 | մինչև-25 | մինչև-25 | մինչև-25 | 100 | | |

Պարտադիր պայման. Ապրանքը պետք է լինի սահմանված ստանդարտներին համապատասխան /փաթեթավորված/:

Սատակարարման քանակները կարող են կրճատվել և ավելանալ՝ ելնելով փաստացի խնամվող շահառուների թվաքանակից

Ապրանքները պետք է մատակարարվեն հանձնման հասցեով՝ ք. Գյումրի, , „Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատության ՊՈԱԿ-ի պահեստ

**Գնորդ**

**Վաճառող**

«Ֆրիտյոֆ Նանսենի» անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն

«Կոնվերսբանկ» Կումայրի Մ/Ճ

ՀՎ 1930031996040100

ՀՎՀՀ 05522929

ստորագրություն

Կ.Տ.

/ստորագրություն/

Կ.Տ